5374

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«08» 05 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 120 - 25

Նախաձեռնող՝ ԿԱՊԱՆԻ «ՆՈՐՈԳՇԻՆ» ՍՊԸ
Կապան, Մ. Հարությունյան 1ա/5

Գործունեությունը՝ Գիրաթաղի մարմարացված կրաքարերի հանքերևակման 1-ին և 2-րդ տեղամասերում երկրաբանական ուսումնասիրություն
Սյունիքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 120 - 25

«08» մայիս 2025 թ.

Սյունիքի մարզի Գիրաթաղի մարմարացված կրաքարերի հանքերևակման 1-ին և 2-րդ տեղամասերում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Կապանի «Նորոգշին» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, Ծրագիր
Գործունեության տեսակ՝	Բ կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Քաջարան համայնքի Լեռնաձոր բնակավայր

Ներածական մաս. Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Սյունիքի մարզի Ներքին Գիրաթաղի մարմարացված կրաքարերի հանքերևակման 1-ին և 2-րդ տեղամասերում (այսուհետ՝ Տեղամասեր) երկրաբանական ուսումնասիրության իրականացման աշխատանքների փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներով: Նախատեսվող գործունեությունը, համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի՝ «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Լեռնաձոր բնակավայրի վարչական տարածքում:

Նկարագրական մաս. Ներքին Գիրաթաղի մարմարացված կրաքարերի հանքերևակման 1-ին և 2-րդ տեղամասերը գտնվում են Սյունիքի մարզի Քաջարան համայնքում, Վերին Գիրաթաղ գյուղից 1,4 կմ դեպի հարավ, Ներքին Գիրաթաղ գյուղից 1,0 կմ դեպի հյուսիս-հյուսիս-արևմուտք, Գիրաթաղ գետի միջին հոսանքի ավազանում և զբաղեցնում են մոտ 9,83 հա տարածք (1-ին տեղամաս 3,23 հա, 2-րդ տեղամաս 6,60 հա)՝ 1400-1602,5 մ բացարձակ բարձրությունների վրա: Տեղամասերը ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով կապված են Ներքին և Վերին Գիրաթաղ, Դավիթբեկ

գյուղերի և Կապան քաղաքի հետ: Մոտակա միակ բնակելի տունը գտնվում է տեղամասերից մոտ 380 մ հեռավորության վրա:

Հայցվող Տեղամասերի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ այլ հողեր: 2-րդ տեղամասում գտնվում է Իրան-Հայաստան 400 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի հենասյունը: Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման վերաբերյալ առկա են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Տաթև» մասնաճյուղի և ՀՀ ՏԿԵՆ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարծիքները:

Տեղամասերի մակերևույթը քարքարոտ է և գյուղատնտեսական նպատակների համար պիտանի չէ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման նպատակով հայցվող տարածքի կոորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացված են ստորև՝

1-ին տեղամաս		2-րդ տեղամաս	
X =4344424.52	Y = 8609236.21	Y =8609521.63	X =4344540.95
X =4344495.15	Y =8609203.14	Y =8609393.01	X =4344702.87
X =4344733.61	Y =8609281.08	Y =8609317.73	X =4344827.35
X =4344635.75	Y =8609341.95	Y =8609485.45	X=4344946.58
X =4344531.07	Y =8609421.87	Y =8609642.75	X =4344726.38

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պետք է համապատասխանեն «Քարաբլոկներ բնական քարից՝ երեսապատման իրերի արտադրության համար» ԳՈՍՏ 9479-2014 տեխնիկական պահանջներին, իսկ թափոնները «Խիճ և ավազ գեղազարդային բնական քարից: Տեխնիկական պայմաններ» 22856 ԳՈՍՏ-ի տեխնիկական պահանջներին:

Տեղամասերը ծագումնաբանորեն հարում են Կապանի կրաքարային նստվածքային (մասամբ մետամորֆիզացված) հաստվածքին: Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում է տիտան-ստորին վոլոնժինի հրաբխանստվածքային ապարների շերտախումբը և ժամանակակից առաջացումները: Տիտան-ստորին վոլոնժինի հրաբխանստվածքային ապարների շերտախումբը ներկայացված է պորֆիրիտներով, տուֆափշրաքարերով, կրաքարերով, մարմարացված կրաքարերով: Շերտախումբը մերկանում է Ներքին Գիրաթաղ գյուղի սահմաններում: Ըստ տարածման մարմարացված կրաքարերի ելքերը լայն գոտիով հետապնդվում են տեղամասի սահմաններում ու տարածվում են տեղամասի հարակից տարածքներում: Տեղամասում մարմարացված կրաքարերն ըստ ֆոնդային նյութերի տվյալների՝ ունեն մեծ հզորություն և տարածված են հետախուզվող շրջանի հարավ-արևմտյան մասում:

Օգտակար հաստվածքի վերին մասում առկա է 1,65 մ-ից մինչև 2,5 մ հզորությամբ

02543163 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

երեսաշերտ՝ ներկայացված ուժեղ ճեղքավորված, հողմահարված, մասամբ փոփոխված մարմարացված կրաքարերով:

Ժամանակակից առաջացումները տարածված են հիմնականում հարթ լեռնալանջային մասերում և ներկայացված են դելյուվիալ առաջացումներով: Տեղամասի տարածքում մարմարացված կրաքարերը ոչ համատարած ծածկվում են 0,25-0,35 մ (միջինը տեղամասերում 0,3 մ) հզորությամբ դելյուվիալ կավավազներով, հողաբուսական շերտի առկայությամբ:

Կատարված դաշտային նախնական դիտարկումների արդյունքները վկայում են, որ Տեղամասերի մարմարացված կրաքարերի հաստվածքը ներկայացված է սակավաթեք (10-15° անկմամբ), շերտանման մարմնի տեսքով, որը մեղմաթեք անկում է դեպի հարավ-արևմուտք:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել սյունակային հորատման, փորձնական բացահանքի անցմամբ, մերկացումների փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով, ինչպես նաև կատարել մարմարացված կրաքարերի միներալային և քիմիական կազմերի, ֆիզիկամեխանիկական ցուցանիշների լաբորատոր ուսումնասիրություններ, պետրոգրաֆիական նկարագրություն և ուսումնասիրել տեղամասի մարմարացված կրաքարերի ճառագայթահիգիենիկ հատկությունները: Հորատանցքերի տեղադիրքերի ընտրությունը կատարվել է հաշվի առնելով հայցվող տարածքի եզրագծերը, ջրային հողերի, տրանսպորտային կառույցների և էլեկտրահաղորդման գծերի առկայությունը: Նախագիծը կազմվել է՝ ապահովելով Գիրաթաղ գետակից 32-36 մ, Վերին Գիրաթաղ տանող համայնքային ճանապարհից նվազագույնը՝ 32 մ, 220 կՎ էլեկտրահաղորդման գծից՝ 25-55 մ, 400 կՎ նոր կառուցվող էլեկտրահաղորդման գծից՝ 45-160 մ հեռավորություն:

Նկատի ունենալով տեղամասի պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մորֆոլոգիական ձևը և չափերը, ինչպես նաև երկրաբանահետախուզական աշխատանքների համար ընտրված տարածքի չափերը, հետախուզումը նախատեսվում է իրականացնել մինչև 20 մ խորությամբ 10 հորատանցքերի (1-ին տեղամասում՝ 4 հորատանցք, 2-րդ տեղամասում՝ 6 հորատանցք), փորձնական բացահանքերի, մերկացումների ուսումնասիրության միջոցով, նմուշարկման զուգորդությամբ: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների, քիմիական և միներոլոգիական ուսումնասիրությունների նպատակով նախատեսվում է վերցնել մերկացումներից՝ 2 նմուշ, փորձնական բացահանքերից՝ 1-ական նմուշ և հորատանցքերից՝ 38 հանուկային նմուշ, յուրաքանչյուրը՝ 5 մ երկարությամբ: Մերկացումներից և փորձնական բացահանքից վերցված նմուշներից նախատեսվում է կազմել 2 համախառը նմուշ, յուրաքանչյուրի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 15 կգ-ի:

Մերկացումներից և փորձնական բացահանքից նմուշարկումը կատարվելու է ակոսային եղանակով: Նմուշները վերցվելու են օգտակար հանածոյի շերտին ուղղահայաց: Պիտանի բլոկների ելքը լեռնազանգվածից որոշելու նպատակով նախագծով նախատեսվում է յուրաքանչյուր տեղամասում իրականացնել փորձնական բացահանքի անցում:

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Լեռնազանգվածից մենաքարերի պոկումը կատարվելու է մեխանիկական, հորատասեպային եղանակով, օգտագործելով բնական ճեղքերը: Հորատանցքերի հորատումը կատարվելու է հորատող հաստոցով՝ 93 մմ տրամագծով: Հանուկի ելքն օգտակար հաստվածքից պետք է լինի 85-98 %-ի սահմաններում, միջինը՝ 95 %:

Մարմարացված կրաքարերի քիմիական կազմի որոշման նպատակով նախատեսվում է վերցնել 4 նմուշ՝ այդ թվում՝ 2-ը հորատհանուկից, 2-ը՝ ակոսային նմուշներից:

Նախատեսվում է կատարել նաև ապարակազմական (պետրոգրաֆիական) հետազոտություններ, որի համար պետք է պատրաստվի 4 հղկուկ (յուրաքանչյուր տեղամասից 2-ական նմուշ): Պետրոգրաֆիական և քիմիական ուսումնասիրությունները կատարվելու են ՀՀ ԳԱԱ երկրաբանական ինստիտուտում, ֆիզիկամեխանիկական փորձարկումները՝ լիցենզավորված լաբորատորիաներում: Հորատումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված խմբի կողմից՝ ժամանակակից ինքնագնաց հորատող հաստոցով կարծր համաձուլվածքային թագիկներով: Նախատեսվում է 10 հորատման հրապարակների կառուցում և դրանց մոտեցման ճանապարհների կարգաբերում մեխանիկական եղանակով: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղանքում կան հանդամիջյան բարվոք վիճակում գտնվող գրունտային ճանապարհներ:

Տեղամասերում նախատեսվում է կատարել ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտություններ՝ Տեղամասերի ապարների կազմը, ճեղքավորվածությունը, կառուցվածքային առանձնահատկությունները, տեղանքի գեոդինամիկ պրոցեսները, ինչպես նաև հիմնական ջրատար հորիզոնները ուսումնասիրելու և նկարագրելու, ջրի որակն ուսումնասիրելու, ռեժիմային դիտարկումներ կատարելու նպատակով:

Աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Ռեկուլտիվացիայի նպատակով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողաբուսական շերտի հետ խառը լանջային փուխր նստվածքները, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով հետ փռել: Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 510 մ^2 (հորատահրապարակներ՝ 350 մ^2, փորձնական բացահանքեր 160 մ^2):

Երկրաբանական ուսումնասիրության ժամանակ առաջանալու են 155,2 մ^3 փխրուն և 369,6 մ^3 ժայռային մակաբացման ապարներ: Աշխատանքների ավարտից հետո դրանք ամբողջությամբ օգտագործվելու են փորձնական բացահանքի խախտված տարածքների ռեկուլտիվացիոն աշխատանքների համար: Դրանք կարճաժամկետ կուտակվելու են խախտված տարածքների անմիջական հարևանությամբ առանձին-առանձին և աշխատանքների անմիջապես ավարտից հետո ամբողջությամբ օգտագործվելու են խախտված հողատարածքների վերականգնման համար: Աշխատանքները կատարվելու են մեխանիկական եղանակով:

Փորձնական բացահանքերի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու են հետևյալ հերթականությամբ՝ բացահանքի հատակին փռվելու են խիստ ճեղքավորված մարմարացված կրաքարերը («փուշտա»), հարթեցվելու են, որի վրա փռվելու են առանձին կուտակված հողաբուսական նյութի խառնուրդով լանջային փուխր նստվածքները:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա: Կենսաբանական ռեկուլտիվացիան իրականացվելու է հիդրոցանքի եղանակով:

Ըստ հաշվետվության՝ համապատասխան մասնագետների կողմից Տեղամասերի նախնական դաշտային ուսումնասիրության ընթացքում կարմիրգրքյան բուսատեսակներ և կենդանատեսակներ, ինչպես նաև դրանց աճելավայրեր և ապրելավայրեր չեն հայտնաբերվել: Տեղամասերը ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Համաձայն հաշվետվությունում ներկայացված տեղեկության՝ հանքերևակման տեղամասի սահմաններում և հարակից տարածքում ըստ ֆոնդային նյութերի տվյալների կարստառաջացման ու սողանքային երևույթներ, ինչպես նաև տեկտոնական խախտումներ չեն գրանցվել:

Աշխատանքներն իրականացնելիս բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվելու է ջրցան-լվացող մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ջրի ցիստեռնով: Կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են բետոնային լցարանում, որտեղից պարբերաբար տեղափոխվելու են սահմանված կարգով: Դաշտային աշխատանքների ավարտին բետոնյա լցարանը հեռացվելու է տարածքից:

Մթնոլորտային օդի որակի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսվել են մի շարք միջոցառումներ՝ առաջնորդվելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հանված հողի բերրի շերտը պահպանվելու է, բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվելու են միջոցներ, որոնք կբացառեն դրա որակական հատկանիշների վատթարացումը: Հողի բերրի շերտը օգտագործվելու է հողերի բարելավման, ռեկուլտիվացման նպատակներով:

Աղմուկի մակարդակը նորմայի սահմաններում պահելու նպատակով տեխնիկան աշխատելու է հաջորդաբար (փորձնական հանույթը կիրականացվի հորատման աշխատանքների ավարտից հետո): Քանի որ մոտակա բնակելի տունը գտնվում է բավականին հեռավորության վրա, հետևաբար, աղմուկի մակարդակը բնակելի գոտում կլինի նորմայի սահմաններից ցածր:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, հետախուզական փորվածքների անցման շրջանում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,

1. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես, չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
2. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ,
3. Գիրաթաղ գետի ջրերի որակի մշտադիտարկում,
4. կենսաբազմազանության մշտադիտարկում:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման համաձայն՝ նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ:

Մշտադիտարկումների իրականացման համար նախատեսվում է մասնահանել 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումար:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ առաջանալու դեպքում իրականացվելու են լրացուցիչ միջոցառումներ (ըստ իրավիճակի)՝ ավելացվելու է կատարվելիք ջրցանը, կրճատվելու է աշխատանքի տևողությունը և այլն:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով ազդակիր բնակավայրում (Լեռնաձոր) իրականացվել է հանրային լսում, որի ընթացքում մասնակիցները հավանության են արժանացրել երկրաբանական ուսումնասիրությունների իրականացումը: Հանրային լսման ընթացքում նախաձեռնողը պարտավորվել է ինչպես երկրաբանահետախուզական աշխատանքների, այնպես էլ հետագա շահագործման ընթացքում աշխատակիցներ ներգրավել համայնքից, ինչպես նաև աջակցել ազդակիր համայնքին: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման նպատակով կստեղծվեն նոր աշխատատեղեր, որտեղ կներգրավվեն ազդակիր բնակավայրի բնակիչները:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/բացառման նպատակով նախատեսվել են մի շարք բնապահպանական միջոցառումներ.

- մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում (յուղերի, քսայուղերի փոխարինում, պահպանում և պահեստավորում) Տեղամասերից դուրս՝ մասնագիտացված ընկերությունների կողմից,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ, տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր՝ համապատասխան ծառայությունների հետ կնքված պայմանագրի համաձայն,

➢ շահագործվող տեխնիկայից արտանետումները նվազեցնելու նպատակով չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,

➢ շահագործվող տեխնիկայի շարժիչների կարգավորում և ձայնախլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով,

➢ տեղամասերին մոտեցնող ճանապարհների ինտենսիվ ջրում, տարածքի խոնավացում՝ փոշեգոյացումը բացառելու նպատակով,

➢ ջրային հոսքի խոչընդոտման, շեղման, ջրային ռեսուրսի աղտոտման, ջրային ռեսուրսի մեջ կեղտաջրերի արտանետման, ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխման բացառում,

➢ խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո,

➢ աշխատանքների իրականացման ընթացքում ապահովվելու է բուսական աշխարհի օբյեկտների, դրանց աճելավայրերի պահպանությունը,

➢ կենդանական աշխարհի պահպանության ուղղված միջոցառումներ:

Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել պետական կառավարման մարմիններից՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացված կարծիքները:

Նախատեսվող գործունեության ընթացքում բոլոր աշխատանքները նախատեսված են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել՝

1. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով՝ փոշու և վնասակար արտանետումների տարածումը կանխարգելելու նպատակով, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առաջացման դեպքում ապահովել հաշվետվությունում նկարագրված կանխարգելիչ միջոցառումների իրականացումը,
2. Ջրային օրենսգրքի պահանջներով՝ ջրային ռեսուրսների (այդ թվում՝ ստորերկրյա) պահպանության նպատակով, բացառել Գիրաթաղ գետակի աղտոտումն ու աղբոտումը, ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 64-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով՝ ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման տարածքների պահպանության նպատակով,
3. Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների կանոնները հաստատելու մասին» N 523-Ն որոշման պահանջներով՝ հորատանցքերի հորատման և փորձնական հանույթի ժամանակ ապահովելով գործող 220 կՎ էլեկտրահաղորդման գծից ոչ պակաս 25 մ, նոր կառուցվող 400 կՎ էլեկտրահաղորդման գծից՝ 30 մ հեռավորություններ:

4. ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության նպատակով,

5. Կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 1643-Ն որոշման պահանջներով՝ խախտված տարածքների վերականգնման նպատակով,

6. Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշմամբ սահմանված պահանջներով՝ իրականացնելով շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ծածկույթ, օդի որակ, աղմուկ, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումներ,

7. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջներով,

8. ապահովել հաշվետվությունում ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Գիրաթաղի մարմարացված կրաքարերի հանքերևակման 1-ին և 2-րդ տեղամասերում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան